

Գերաշնորհ Տէր
Թորգոմ Ս. Արք. Մանուկեան
Առաջնորդ Արեւելեան Թեմի եւ
Նախագահ Թեմական Խորհուրդի
Նիւ Եօրք,

19 Մարտ 1979
Թորոնթօ

Սրբազան Հայր,

Մարտ 2, 1979 թուակիր եւ 443 թիւ շրջաբերական մը, որ Ձերդ Սրբազանութեան կողմէ ստորագրուած եւ ուղղարկուած էր Հոգեւոր Հովիւներու եւ ծխական Խորհուրդներու ատենապետներուն, 15 Մարտ 1979 թուականին Ս. Երրորդողութիւն Եկեղեցւոյ կողմէ գաղութիս իւրաքանչիւր հայ հասցէին, հոգ չէ թէ անոնք Հայաստանեայց Եկեղեցւոյ զաւակներ չըլլան, դրկուեցաւ: Կերեւի թէ Թորոնթօ հոգեւոր հովիւներով եւ ծխական Խորհուրդի ատենապետներով լեցուած է ու առանց հետեւորդի մնացած:

Ընկալեալ սովորութիւն է, որ վարդապետի մը անունին առջեւ `` Հոգեշնորհ Տէր `` գրուի եւ եպիսկոպոսի մը `` Գերաշնորհ տէր ``: Կերոյիչեալ շրջաբերականին մէջ առաջինը գրուած իսկ երկրորդը չէր գործածուած: Ձեզի պէս բծախնդիր հոգեւորականի մը աչքէն այսպիսի զանցառութիւն մը ինչպէս վրիպած է:

Շրջաբերականը իր բովանդակութեամբ իրողութիւններու անհամապատասխան գտայ: Երբ հանրութեան տեղեկութիւն մը կը տրուի, եղելութիւնները առանց յեղաթիւրելու պէտք է փոխանցուի, հոգ չէ թէ՛ այդ մեր անձին ի վնաս է:

Ձերդ Սրբազնութիւնը շատ լաւ գիտէր, թէ Թորոնթօյի մէջ երկրորդ ծուխ մը կը կազմուէր եւ այդ Ձեր Սրբազնութեան հրահանգն էր եւ ես անձնապէս 1978 տարուայ Յունիս ամսուայ առաջին օրերուն, Ձեր Զուկցերեա մեկնումէն առաջ, այս ուղղութեամբ Ձեզ տեղեկ պահած էի:

Ձերդ Սրբազնութիւնը շատ լաւ գիտէ, թէ Գերշ. Տէր Արիս Ս. Եպս. Շիրվանեան ծխական Խորհուրդ մը նշանակելու որեւէ իրաւասութիւն չունի եւ ծխական Խորհուրդ ալ չէ նշանակած ու այս 13 հոգինոց ծխական Խորհուրդը 30 Դեկ. 1977 թուականին Ձերդ Սրբազնութեան հրահանգին համաձայն նշանակուած ու Յ Յունուարին Ձեր հեռաձայնային հրահանգով լուծուած 9 հոգինոց Ծխական Խորհուրդին հետ բացարձակապէս կապակցութիւն չունի:

Ձերդ Սրբազնութիւնը շատ լաւ գիտէ, թէ Ս. Խաչ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ 13 հիմնադիր անդամները, Ձեր իսկ թելադրութեամբ, 21 Յունիս 1978 թուականին ժանաչման համար Ձերդ Սրբազնութեան դիմում կ'փտարած էին, սակայն Ձեր ընդգրկած զարմանալի ընթացքին պատճառաւ, զրաւոր եւ հեռաձայնային բանակցութիւններ սկսան, որոնք դժբախտաբար շինիչ ըլլալէ շատ հեռու էին:

Ձերդ Սրբազնութիւնը շատ լաւ գիտէ, թէ Ս. Խաչ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ ծխական Խորհուրդը Հոգեշնորհ Տէր Վազգէն Ծ. Վրդ. Քէշիշեանը ժամերգութիւններու հրատարած եւ մերժուած էր, Թեմական իշխանութեան կողմէ չէր ճանաչուած, որով պատարագ մատուցանելու համար հրատարակուած եպիսկոպոսն ալ, թեմի հետ կապ չունեցող եկեղեցիի մը մէջ պատարագելու համար Թեմակալ Առաջնորդէն արտօնութիւն առնելու հարկաւոր չէր:

Ձերդ Սրբազնութիւնը շատ լաւ գիտէ, թէ Գերշ. Տ. Արիս Ս. Եպս. Շիրվանեան այնքան առեւ որ կարգաթող չէ, փիլոնագուրկ չէ, կախակայեալ չէ կրնայ Ս. Պատարագ մատուցանել: Ձերդ Սրբազնութիւնը, Առաջնորդական լիազօրութեամբ, Սրբազանին կրնայ արտօնութիւն չտալ Թեմական իշխանութեան պատկանող եկեղեցիներէն ներս պատարագ մատուցանել եւ սակայն այս կարգի չէ այնպէս վերլուծել, թէ Սրբազանը չկրնար պատարագ մատուցանել:

Ձերդ Սրբազնութիւնը շատ լաւ պէտք է գիտցած ըլլար, թէ Գանատական չորս եկեղեցիներու ութը հոգինոց ներկայացուցիչները, Վեհափառ Հայրապետի ներկայացուցիչին հետ 23 Յունուար 1979 թուականին տեսութիւն մը ունեցած էին: Այդ տեսութեան ընթացքին, նորին Սրբազնութեանը անցեալ մէկ քանի ամիսներու թղթակցութեանց բովանդակութիւնը մանրամասնօրէն բացատրուած էր: Նորին Սրբազնութեան համաձայն ժողովուրդին ձայնը պէտք էր լսուեր: Ըստ Ձերդ Սրբազնութեան `` ժողովուրդը ո՞վ էր `` , `` ժողովուրդը դիմագիծ չունէր `` : Ուստի ժողովուրդի ձայնը ներկայացնող Ս. Խաչ Եկեղեցւոյ ծխական Խորհուրդը `` անկարգներ `` ըլլալով կարգի չէ կոչել եւ ոչ ալ Գերշ. Տ. Արիս Ս. Եպս. Շիրվանեանը `` անկարգ ընթացք `` ի մը մէջ գտնուելով կարելի է դատապարտել:

Ձերդ Սրբազնութիւնը շատ լաւ գիտէ, թէ պատարագիչ կղերականներ Համիլթոնի, Վենքուվորի եւ Օթավայի մէջ `` օտար եկեղեցի `` ի մէջ Ս. Պատարագ կը մատուցանեն: Ի հարկ է Գերշ. Տ. Արիս Ս. Եպս. Շիրվանեան ալ, քաղաքիս մէջ տակաւին երկրորդ հայկական եկեղեցի մը գոյութիւն չունենալուին, ոչ հայկական եկեղեցիի մը մէջ պատարագեց: Մնաց որ Ս. Երրորդութիւն Եկեղեցին ալ Ս. Ծննդեան եւ Ս. Զատիկի պատարագները `` օտար եկեղեցի `` ի մէջ կ'ընէ:

Ձերդ Սրբազնութիւնը շատ լաւ գիտէ, թէ Ձեր իսկ թելադրութեամբ գրուած դիմումագիրը եթէ ժամանակին ընդունած ըլլայիք եւ `` Ս. Խաչ `` անունին շուրջ անտեղի եւ անտրամաբանական առարկութիւններ յարուցած չըլլայիք, այսպիսի շրջաբերական մըն ալ խնդրոյ առարկայ չպիտի ըլլար:


Ձերդ Սրբազնութիւնը շատ լաւ գիտէ, թէ Ս. Խաչ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Ս. Պատարագները 11 Փետրուար 1979 թուականէն ի վեր անխաբան կը շարունակուին եւ Վեհափառ Հայրապետը, ամէն կիրակի, մեր կողմէ դրկուած հեռագիրներով կացութենէն տեղեակ կը պահուի:

Ձերդ ՍրբազնուԹիւնը շատ լաւ գիտէ, թէ որպէս Թեմակալ Առաջնորդ,
Ձերդ ՍրբազնուԹեան համար շատ աւելի խոհեմ շարժում մը կ'ըլլար, Ձեր
Սուրբ Էջմիածինէն վերադարձին շրջաբերական մը հանել-- եթէ այդ հարկա-
ւոր ըլլար-- քան թէ մեկնումի օրերուն հապճեպով քաներ մը գրել:

Ձերդ ՍրբազնուԹիւնը շատ լաւ գիտէ, թէ միշտ ջանացած եմ իրողու-
Թիւնները եղածին պէս ըսել, հոգ չէ թէ շատ անգամ անոնք հաճելի չըլլան:

Համբուրելով

Ձերդ ՍրբազնուԹեան Աջը



Արմէն Քիւրքճեան

94 Apricot St
Thornhill, Ont L3T 1C8